RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1 կիսամյակ 2023

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2023 թ. 1-ին կիսամյակում Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է գրեթե **142 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **28 մլրդ ՀՀ դրամով** կամ **25%**-ով ավել է քան 2022 թվականի նույն ժամանակահատվածում գրանցած արդյունքը:

- 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում, բոլոր ՀՀ բանկերը եղել են շահութաբեր:

- Եթե նման շահութաբերության մակարդակը պահպանվի, ապա սույն թվականի բանկային համակարգի զուտ շահույթը կարող է կազմել շուրջ **300 մլրդ ՀՀ դրամ (2022**թ կազմել է **262 մլրդ ՀՀ դրամ)**:



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում աճել են ընդամենը **1%**-ով:

- Առ **30.06.2023**, ընդհանուր ակտիվները կազմել են **8.481 մլրդ ՀՀ դրամ**:



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56.9%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **42.4%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **17.7%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 30.06.23



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում աճել է **8.3%**-ով:
- Առ **30.06.2023** ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.521 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **53%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, եւ Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **60.2%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ ԱԿԲԱ ԲԱՆԿ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **42.5%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **18.6%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 30.06.23



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում գրեթե չեն փոփոխվել, նվազելով ընդամենը **0.2%-ով:**

- Առ **30.06.2023**, ընդհանուր պարտավորությունները կազմել են **7.064 մլրդ ՀՀ:**



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում աճել են **1.2%-ով:**
- Առ **30.06.2023**, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **5.106 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **72%:**



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում **6.9 մլրդ ՀՀ դրամով,** կամ **2%**-ով:

- Առ **30.06.2023**, բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը կազմում է շուրջ **352 մլրդ ՀՀ դրամ**:

- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 30.06.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **100 մլրդ ՀՀ դրամով**, կամ **8%** ու կազմել **1.417 մլրդ ՀՀ դրամ**:
- 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **75 մլրդ ՀՀ դրամով**, կամ **13%,** կազմելով **656 մլրդ ՀՀ դրամ**:
- 2023 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են **8** բանկ՝ ընդհանուր գումարով **68 մլրդ ՀՀ դրամ.**

1. *Արդշինբանկ* ***18 մլրդ ՀՀ դրամ,***
2. *Ամերիաբանկ* ***– 17.7 մլրդ ՀՀ դրամ,***
3. *Ինեկոբանկ* ***– 13 մլրդ ՀՀ դրամ,***
4. *Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան* ***– 5.8 մլրդ ՀՀ դրամ,***
5. *Կոնվերս Բանկ* ***– 4.4 մլրդ ՀՀ դրամ,***
6. *ԱԿԲԱ ԲԱՆԿ* ***– 4.4 մլրդ ՀՀ դրամ,***
7. *Էվոկաբանկ* ***– 3.4 մլրդ ՀՀ դրամ,***
8. *ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ* ***– 0.74 մլրդ ՀՀ դրամ,***

Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 30.06.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 30.06.2023թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **52%**-ը և հավասար է **733 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.06.2023թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **46**%-ը և հավասար է **656 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 30.06.2023թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **2%**-ը և հավասար են **28 մլրդ ՀՀ դրամ:**

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 30.06.2023



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am